## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 սեպտեմբերի 2025 թվականի N 95-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով, Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 9-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ

ՁԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 09
գ. Փարաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Փարաքար համայնքի
Ավագանու 2025 թվականի
սեպտեմբերի 9-ի N 95-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***(ներկայացնող՝ համայնքի ղեկավար Վալոդյա Գրիգորյան)***
2. ԱՇՈՏ ՍԱՐԳՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***(ներկայացնող՝ ՔՀԳ և Բ բաժնի պետ Հակոբ Միքաեյան)***
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ՝ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԵՂԱՄ ՌՈՒԲԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***(ներկայացնող՝ ՔՀԳ և Բ բաժնի պետ Հակոբ Միքաեյան)***
4. ՄԱՆՎԵԼ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***(ներկայացնող՝ ՔՀԳ և Բ բաժնի պետ Հակոբ Միքաեյան)***
5. ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***(ներկայացնող՝ ՔՀԳ և Բ բաժնի պետ Հակոբ Միքաեյան)***
6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ ***(ներկայացնող՝ ՖԳԵՀ և Հ ԾԿ և Հ բաժնի գլխավոր մասնագետ Գյուլգյազ Համբարձումյան )***
7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի ԹԻՎ 72-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***(ներկայացնող՝ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Անյուտա Սաֆարյան)***
8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐՎԱ ՍԱՀՄԱՆՈՒՄ ***(ներկայացնող՝ համայնքի ղեկավար Վալոդյա Գրիգորյան)***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ Ու Մ**

09 սեպտեմբերի 2025 թվականի N 96-Ա

### ԱՇՈՏ ՍԱՐԳՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի կողմից 2025 թվականի օգոստոսի 28-ին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը, քաղաքացի Աշոտ Սարգսի Մելքոնյանի 2025 թվականի հուլիսի 15-ի N 3478 դիմումը և Փարաքար համայնքի ավագանու <<Քաղաքաշինության, հողօգտագործման և անշարժ գույքի հարցերի>> մշտական հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 23 որոշումը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող՝ Աշոտ Սարգսի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող, 04-094-0303-0044 կադաստրային ծածկագրով, 0,027 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /հողատեսքը՝ վարելահող/ հողամասի նշանակությունը փոփոխել՝ որպես արդյունաբերական,ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ հետագայում գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն և ծածկ կառուցելու համար:
2. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ կատարելու սույն որոշումից բխող գործառույթները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ

ՋԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎՆՅՈՒՏԱ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 09
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ Ու Մ**

09 սեպտեմբերի 2025 թվականի N 97-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ՝ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԵՂԱՄ ՌՈՒԲԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 և 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշումներով, հիմք ընդունելով Գեղամ Ռուբենի Սարգսյանի 2025 թվականի հունիսի 2-ի N 2506 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23082025-04-0002 վկայականը, Փարաքար համայնքի ղեկավարի կողմից տրված 2025 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 2550 տեղեկանքը՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների վերաբերյալ, Փարաքար համայնքի ավագանու <<Քաղաքաշինության, հողօգտագործման և անշարժ գույքի հարցերի>> մշտական հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 24 որոշումը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Տալ համաձայնություն Գեղամ Ռուբենի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Երևանյան փողոց 1-ին փակուղի թիվ 9 հասցեում գտնվող, 04-094-0103-0040 կադաստրային ծածկագրով /14062023-04-0064/, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.1417 հա մակերեսով հողամասին կից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Երևանյան փողոց 1-ին փակուղի թիվ 9/3 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ 04-094-0103-0083 կադաստրային ծածկագրով /23082025-04-0002/ բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0088 հա մակերեսով հողամաս ուղղակի վաճառքի միջոցով՝ ընդլայնման նպատակով օտարելու Գեղամ Ռուբենի Սարգսյանին:

2. Վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ մեկ քառակուսի մետրի համար 6834.3 ՀՀ դրամ:
3. Հանձնարարել համայնքի ղեկավարին կատարելու սույն որոշումից բխող գործառույթները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ

ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 09
գ. Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 սեպտեմբերի 2025 թվականի N 98-Ա

## ՄԱՆՎԵԼ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի կողմից 2025 թվականի հունիսի 28-ին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը և քաղաքացի Մանվել Անուշավանի Բարսեղյանի 2025 թվականի օգոստոսի 15-ի N 4070 դիմումը, Փարաքար համայնքի ավագանու <<Քաղաքաշինության, հողօգտագործման և անշարժ գույքի հարցերի>> մշտական հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 25 որոշումը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող՝ Մանվել Անուշավանի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող, 04-094-0303-0042 կադաստրային ծածկագրով, 0,02 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /հողատեսքը՝ վարելահող/ հողամասի նշանակությունը փոփոխել՝ որպես արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ հետագայում գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն կառուցելու համար:
2. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ կատարելու սույն որոշումից բխող գործառույթները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ

ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՍԱՖԱՐՅԱՆ ԿՆՅՈՒՏԱ

ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 09
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 սեպտեմբերի 2025 թվականի N 99-Ա

### ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 1-ին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը և քաղաքացի Արմեն Սարգսի Ստեփանյանի 2025 թվականի օգոստոսի 28-ի N 4306 դիմումը,Փարաքար համայնքի ավագանու <<Քաղաքաշինության, հողօգտագործման և անշարժ գույքի հարցերի>> մշտական հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 26 որոշումը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Արևաշատ գյուղում գտնվող՝ Արմեն Սարգսի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող, 04-026-0015-0001 կադաստրային ծածկագրով, 0,13 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /հողատեսքը՝ վարելահող/ հողամասի նշանակությունը փոփոխել՝ որպես արդյունաբերական,ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ հետագայում ջերմոց և տնտեսական շինություն կառուցելու համար:
2. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ կատարելու սույն որոշումից բխող գործառույթները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ

ՉԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ

ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 09
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 սեպտեմբերի 2025 թվականի N 100-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Փարաքար համայնքի ավագանու <<Զարգացման ծրագրերի, ֆինանսաբյուջետային, տնտեսական և ենթակառուցվածքների>> մշտական հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 6 որոշումը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Արմավիր մարզի Փարաքար համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ -12 | Դեմ -0 | Ձեռնպահ -1 |
|---|---|---|
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ | | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ | | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ | | |
| ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ | | |
| ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ | | |
| ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ | | |
| ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ | | |

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 09
գ. Փարաքար

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության*
*Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու*
*2025 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 100 -Ա որոշման*

*Հաղորդում՝*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ*

1.Փարաքար համայնքի 2025թ. երկրորդ եռամսյակի ընթացքում հավաքագրված եկամուտների վերաբերյալ հաշվետվությունը և 2024թ նկատմամբ համեմատական վերլուծություն

2025 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում ընդամենը բյուջեն հավաքագրվել է 788 մլն 892.440 հազ.դրամ գումար, 2025 թվականի բյուջեն չհաստատված լինելու պատճառով գործառույթները իրականացվել են նախորդ տարվա համամասնությամբ, որը կազմում է նախորդ տարվա բյուջեի տարեկան պլանի 53.7 %-ը: 2024 թվականի նույն ժամանակահատվածում հավաքագրվել է 649 մլն 387.0 հազ.դրամ գումար- 44.2 %-ը: Եկամուտը ավել է հավաքագրվել 9.5 %-ով: 9.5 %- աճ է գրանցվել նաև զուտ եկամուտը փաստացի հավաքագրումից:

| Եկամտատեսակ | 2024թ. 1-ին կիսամսյակ | | | 2025թ. 1-ին կիսամսյակ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Տարվա պլան | Փաստացի կատարողական | % | Տարվա պլան | Փաստացի կատարողական | % |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 1,470,000.0 | 649387.0 | 44.2 | 1,470,000.0 | 788892.440 | 53.7 |
| 1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 421300.0 | 141335.8 | 33.5 | 421300.0 | 152112.357 | 36.1 |
| 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից | 175300.0 | 52914.9 | 30.2 | 175300.0 | 56805.1 | 33.5 |
| Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 17,300.00 | 4442.2 | 25.7 | 17,300.00 | 2698.250 | 15.6 |
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 20,000.00 | 7580.2 | 37.9 | 20,000.00 | 5574.289 | 27.9 |
| Անշարժ գույքի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 138,000.00 | 40892.5 | 29.6 | 138,000.00 | 48532.555 | 35.2 |
| 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | 246,000.00 | 88420.9 | 35.9 | 246,000.00 | 95307.263 | 38.7 |
| 1.3 Տեղական տուրքեր | 33,800.00 | 25117.4 | 74.3 | 33,800.00 | 37769.740 | 111.7 |
| -Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարություն | 6,450.00 | 10428.0 | 161.7 | 6,450.00 | 23310.0 | 361.4 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| -Շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման,արդիականացման, աշխատանքներ | 600.00 | 30.00 | 0.05 | 600.00 | 0.0 | 0.0 |
| -Շինությունների քանդման աշխատանքներ | 100.00 | 35.0 | 0.35 | 100.00 | 75.0 | 75.0 |
| -Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտ. | 6731.3 | 2877.5 | 42.7 | 6731.3 | 2608.932 | 38.7 |
| -Բացօթյա վաճառք կազմակերպելու | 164.70 | 671.4 | 407.6 | 164.70 | 73.375 | 44.5 |
| -Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ առք ու վաճառք իրակ. թույլտվ.համար | 0.00 | 50.0 | 0.0 | 0.00 | 75.0 | 0.0 |
| -Ժամը24-00 ից հետո աշխատելու թույլտվության /բաղնիք սաունա/ | 0 | 0.0 | 0 | 0 | 1036.5 | 0 |
| -Հանրային սննդի կազմակերպում և իրացում | 3597.0 | 2079.4 | 57.8 | 3597.0 | 571.208 | 15.9 |
| -Վառելիքաքսայուղերի վաճառքի թույլտվություն | 3,220.00 | 2542.4 | 78.9 | 3,220.00 | 1705.0 | 53.0 |
| -Արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար | 12,187.00 | 5903.7 | 48.4 | 12,187.00 | 7814.725 | 64.1 |
| -Քաղաքացիական հոգեհանգստի ծիսակատարության ծառայության մատուցման թույլտվություն | 500.00 | 500.00 | 100 | 500.00 | 500.00 | 100 |
| Ֆիրմային անվանում | 250.00 | 0.00 | 0.0 | 250.00 | 0.00 | 0.0 |
| 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 766,435.58 | 383066.9 | 50.0 | 766,435.58 | 456344.3 | 59.5 |
| 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից | 761,424.28 | 380712.1 | 50.0 | 761,424.28 | 453989.200 | 59.6 |
| Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 5,011.30 | 2354.8 | 47.0 | 5,011.30 | 2355.100 | 47.0 |
| 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 248464.4 | 99866.9 | 40.1 | 248464.4 | 142666.0 | 57.4 |
| 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ | 16,000.00 | 5593.7 | 34.9 | 16,000.00 | 3947.045 | 24.7 |
| 3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից | 0.00 | 18.0 | 0.0 | 0.00 | 0.0 | 0.0 |
| 3.5 Վարչական գանձումներ | 214,727.00 | 84595.8 | 39.4 | 214,727.00 | 124218.961 | 57.8 |
| Տեղական վճարներ | 132,027.00 | 44802.6 | 34 | 132,027.00 | 48014.089 | 36.4 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ինքնակամ կառույցների օրինականացման վճար | 82,700.00 | 39793.2 | 48.1 | 82,700.00 | 76204.873 | 92.1 |
| 3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից | 0.00 | 200.0 | 0.0 | 0.00 | 350.0 | 0.0 |
| 3.9 Այլ եկամուտներ | 17,737.42 | 9159.4 | 51.6 | 17,737.42 | 14150.037 | 79.8 |
| ***Ընդամենը վարչական բյուջե*** | **1,470,000.0** | **649387.0** | **44.2** | **1,470,000.0** | **788892.440** | **53.7** |
| Հողի օտարումից մուտքեր | 125266.98 | 173591.2 | 74.0 | 125266.98 | 82701.236 | 66.0 |
| Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 101500.0 | 46396.8 | 45.7 | 101500.0 | 10339.857 | 10.2 |
| Նվիր, ժառանգ. իրավ-ով ֆիզ. անձ. և կազմակերպ-ից համ-ին, վերջինիս ենթ. բյուջ. հիմն. տնօրին. անցած գույքի (հիմն. միջ. կամ ոչ նյութ. ակտ. չհանդ.) իրաց-ից և դրամ. միջ-ից կապ. ծախս. ֆին. համար համ. բյուջե ստ. մուտքեր՝ տրամ. ներքին աղբյուր-ից | | | | | 607.998 | 0.0 |
| ֆ/բ ազատ մնացորդ | 239733.016 | 239733.02 | 100 | 239733.016 | 239733.016 | 100 |
| ***Ընդամենը ֆոնդային բյուջե*** | 466500.0 | 378807.546 | 81.2 | 466500.0 | 93649.091 | 20.1 |
| ***Ընդամենը բյուջե*** | 1936500.0 | 1028194.5 | 53.1 | 1936500.0 | 882541.531 | 45.6 |
| ***Զուտ եկամուտ*** | 703564.42 | 266320.1 | 37.8 | 703564.42 | 332548.14 | 47.3 |

2. Փարաքար համայնքի 2025թվականի բյուջեի ծախսերի կատարման <u>երկրորդ եռամսյակի</u> հաշվետվությունը ըստ գործառնական դասակարգման և 2024թ նկատմամբ համեմատական վերլուծություն

2025 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում ծախսերը իրականացվել են նախորդ տարվա բյուջեի ծախսերի համամասնությամբ և ընդամենը կատարվել է ծախսեր 405 մլն 939.168 հազ.դրամ, որը կազմում է ծախսերի 27.5 %-ը: 2024 թվականի նույն ժամանակահատվածում կատարվել է ծախսեր 447 մլն 170.6 հազ.դրամ – 30.4 %-ը: Ծախսերի 2.9 % թերակատարումը պայմանավորված է 2025 թվականի բյուջեն չհաստատված լինելու և գործառույթները նախորդ տարվա բյուջեի համամասնությամբ կատարումով:

| N | Ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման | 2024թ. 1-ին կիսամյակ | | | 2025թ. 1-ին կիսամյակ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տարվա պլան | փաստացի | կատ % | Տարվա պլան | փաստացի | կատ % |
| I | **<u>Վարչական բյուջե ընդամենը</u>** | **1477838.0** | **447170.6** | **30.4** | **1477838.00** | **405939.168** | **27.5** |
| 1 | Տեղական ինքնակառավարում | 514954.0 | 152797.3 | 29.9 | 514954.0 | 132249.307 | 25.7 |
| 2 | Համայնքային այլ ծառայություն | 81853.85 | 12328.6 | 15.1 | 81853.85 | 5998.886 | 7.3 |
| 3 | Գյուղատնտեսություն | 500 | 255.0 | 51 | 500 | 0 | 00.0 |
| 4 | Մշակույթի տներ,ակումբներ | 0 | 0 | 0.0 | 0 | 0 | 0.0 |
| 5 | Սոցիալական ապահովություն | 16000.0 | 5050.0 | 31.6 | 16000.0 | 1920.0 | 0.12 |
| | Հանգիստ,մշակույթ և կրոն | 0 | 0 | 0.0 | 0 | 0 | 0.0 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | Մշակութային ծառայություններ | 65900.0 | 23329.9 | 39.5 | 65900.0 | 16000.0 | 24.3 |
| 7 | Հանգստի և սպորտի ծառայություններ | 20000.0 | 4702.0 | 23.5 | 20000 | 4702.000 | 23.5 |
| 8 | Նախադպրոցական կրթություն | 290200.0 | 133334.9 | 45.9 | 290200.0 | 133334.888 | 45.9 |
| 9 | Արտադպրոցական դաստիարակություն | 92000.0 | 44468.3 | 61.8 | 92000 | 43950.900 | 47.7 |
| 7 | **Բնակկոմունալ տնտեսություն** | 168154.0 | 70914.6 | 34 | 168154.00 | 57152.225 | 34.0 |
| 7.1 | Ճանապարհների վերանորոգում | 0 | 0 | 0.0 | 0 | 0 | 0.0 |
| 7.2 | Աղբահանում | 149500.0 | 55851.8 | 37.3 | 149500.0 | 54002.225 | 36.1 |
| 7.3 | Կեղտաջրերի հեռացում | 18654.0 | 3901.8 | 21.8 | 18654.0 | 3150.0 | 1.7 |
| 7.4 | Կանաչապատում | 0 | 0 | 0.0 | 0 | 0 | 0.0 |
| 8 | Արտաքին լուսավորում | 41000 | 11161.0 | 27.2 | 41000 | 10630.962 | 25.9 |
| 10 | Պահուստային ֆոնդ | 187276.15 | 0 | 0.0 | 187276.15 | 0 | 0.0 |
| **II** | **Ֆոնդային բյուջե** | **466500.0** | **78443.0** | **78.4** | **466500.0** | **11393.059** | **2.40** |
| 1 | Շենքերի և շինությունների շինարարություն | 401500.0 | 76460.5 | **7.4** | 401500.0 | 11203.059 | **2.8** |
| 2 | Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 0.0 | 0.0 | **0.0** | 0.0 | 0.0 | **0.0** |
| 3 | Վարչական սարքավորումների ձեռք բերման ծախսեր | 20000.0 | 1652.5 | **0.8** | 20000.0 | 190.0 | **0.95** |
| 5 | Տրանսպորտային սարքավորումներ | 0.0 | 0.0 | **0.0** | 0.0 | 0.0 | **0.0** |
| 6 | Նախագծահետազոտական ծախսեր | 45000.0 | 330.0 | **3.3** | 45000.0 | 0.0 | **0.0** |
| I+II | **Ընդամենը ծախսեր** | **1944338.0** | **525613.6** | **33.4** | **1944338.00** | **417332.227** | **21.5** |

**2025թվականի երկրորդ եռամսյակի ընթացիկ ծախսեր է կատարվել ընդամենը 405 մլն 939.168 հազ դրամի, որից՝**

Աշխատավարձեր և դրամական խրախուսումների գծով՝ 147 մլն 757.784 հազ. դրամ, այլ վարձատրությունների գծով 701.600 հազ դրամ:

Էներգետիկ ծառայությունների գծով կատարվել է համայնքի բնակավայրերում թվով 15 բաժանորդի էլեկտրաէներգիայի և թվով 8 բաժանորդի բնական գազի ծախս 14 մլն 973.336 հազ դրամի:

Կոմունալ ծառայությունների գծով կատարվել է ծախս 30 մլն 311.461 հազ դրամի, որից թվով 8 բաժանորդի խմելու ջրի ծախս 286.461 հազ դրամ, վճարվել է 26 մլն 875.000.0հազ դրամ համայնքի 9 բնակավայրերի աղբահանության ծառայություն իրականացնող <<Մաքրություն>> ՍՊընկերության: Համայնքի տարբեր հատվածներում կատարվել է կոյուղու խցաբացման և դիտահորի մաքրման աշխատանքներ, որի համար վճարվել է 3 մլն 150.0 հազ դրամ:

Կապի ծառայություններ գծով կատարվել է ծախս 641.363 հազ դրամի, որից՝ համայնքի 9 բնակավայրերի համայնքապետարանների ինտերնետ կապը և հեռահաղորդակցության կապը ապահովելու համար <<Յուքոմ ՍՊԸ-ին 104.0 հազ.դրամ, <<Արփինետ>> ՍՊԸ-ին 320.000 հազ

դրամ, <<Վիվա Արմենիա>> ՓԲԸ-ին 45.172 հազ դրամ, <<Տելեկոմ Արմենիա>> ՓԲԸ ին 39.276 հազ դրամ, փոստային ծառայություններից օգտվելու համար <<Հայ Փոստ>> ՓԲԸ-ին 105.790 հազ դրամ և <<Նիկիտա Մոբայլ>> ՍՊ ընկերությանը 27.125 հազ դրամ SMS ծառայությունների տրամադրման համար:

Ապահովագրական վճարների գծով կատարվել է ծախս 129.0 հազ. դրամի՝ որից մերսեդես մակնիշի 444 UO 03 պետհամարանիշի մեքենայի համար 45.0 հազ. դրամ և 136 DG 61- կամազ մեքենայի համար 43.0 հազ դրամ, 137 DG61 մազ մեքենայի համար 41.0 հազ դրամ:

Ներքին գործուղումների գծով կատարվել է ծախս 465.0 հազ. դրամի թվով 6 համայնքային ծառայողների Արմավիր քաղաք վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար:

Համակարգչային և տեղեկատվական ծառայություններ գծով կատարվել է ծախս 1 մլն 422.000 հազ. դրամի, որից՝ 972.0 հազ. դրամ անշարժ գույքի հարկի ավտոմատացված բազայի ծրագրի համար, 450.0 հազ դրամ ՏՀԶՎԿ ծրագրի համար:

Ներկայացուցչական ծախսերի գծով կատարվել է ծախս 1 մլն 449.730 հազ դրամի, որից ձեռք են բերվել 434.130 հազ.դրամ ձմեռային զորակոչի թվով 33 նորակոչիկների համար առաջին անհրաժեշտության պարագաներ, 620.600 հազ. դրամ մարտի 8-ի առթիվ համայնքի ենթակա ՀՈԱԿ-ների և աշխատակազմի համար ձեռք է բերվել 60 հատ տորթեր և շամպայններ: Ձեռք են բերվել 395.0 հազ. դրամի վարդեր՝ ապրիլի 24-ի, մայիսի 9-ի, դպրոցների վերջին զանգերի և արվեստի դպրոցի հաշվետու համերգի համար կազմակերպված միջոցառումների համար:

Մասնագիտական ծառայությունների գծով կատարվել է ծախս 4 մլն 072.403 հազ. դրամի՝ որից Արևաշատի մանկապարտեզի բացման համար ֆուրշետի կազմակերպում 165.000 հազ դրամ, գնումների համակարգման ծառայության համար վճարվել է 2մլն 250.000 հազ. դրամ, գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համար (թվով 8 բաժանորդներ) 86.603 հազ դրամ, կոյուղագծերի խցաբացման համար տեխնիկական միջոցների կիրառմամբ կատարվել է ծախս 960.0 հազ դրամի, անօթևան՝ Մերձավան գյուղում մահացած հայտնաբերված Գոռ Խաչատրյանի հուղարկավորությունը կազմակերպելու համար կատարվել է սգո ծառայության ծախս 45.0հազ դրամի: Վերջին զանգի կապակցությամբ ուղերձների տպագրության համար կատարվել է ծախս 27.0 հազ.դրամ, կատարվել է համայնքի հաշվեկշռում գտնվող 4 մեքենաների (Մերսեդես Բենց E200, Վազ 2107, Գազ-48321-10-3300և Զիլ KO-431(ZIL-130)) գույքի գնահատման աշխատանքներ 72.0 հազ. դրամի, փոխանցվել է <<ՀԷՑ>> ՓԲԸ-ին եռաֆազ բաժանորդի փաստաթղթերի նախապատրաստման վճար 86.0 հազ. դրամ, կատարվել է KIA SPORTAGE մակնիշի 508 HI 61 համարանիշի և ՎԱԶ 21144 մակնիշի 517 HI 61 համարանիշի ծառայողական մեքենաների ապահովագրական ծախսեր 93.0 հազ.դրամի և Փարաքար գյուղի Վազգեն Սարգսյան փողոցի ջրագծի միացման աշխատանքների համար կատարվել է ծախս 220.0 հազ. դրամ, փոխանցվել է Փարաքար կայքի դոմեյնի երկարաձգման համար 10.000 հազ. դրամ և ID կտրոն տրամադրման համար 52.800 հազ դրամ: Կատարվել է KIA SPORTAGE 508 HI 61 մեքենայի ընթացիկ նորոգման ծառայության գումար 5.0 հազ.դրամ:

Մեքենաների սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով կատարվել է 242.5 հազ. դրամ ծախս՝ համայնքապետարանի համակարգիչների քարթրիջների լիցքավորում 80.000 հազ. դրամի, մազ մեքենայի և էքսկավատորի տեխնիկական սպասարկումների համար 162.5 հազ դրամ:

Գրասենյակային, տրանսպորտային, կենցաղային և հատուկ նպատակային նյութեր հոդվածներով կատարվել են ծախսեր 3 մլն 292.4 հազ դրամ, որից գրասենյակային ապրանքներ 369.131 հազ.դրամ, 232.05 հազ դրամը դիզելային վառելիք, 179.2 հազ.դրամը էքսկավատորի և KIA SPORTAGE ծառայողական մեքենաների ավտոպահեստամասեր ձեռք բերման համար, համայնքի վարչական շենքերի մաքրությունն ապահովելու համար ձեռք է բերվել մաքրիչ նյութեր 275.383 հազ. դրամի, Մերձավան գյուղի Մասիսի փողոցում կոյուղագծի փոխարինման համար ձեռք է բերվել 94.5

հազ.դրամի մետաղական խողովակ, Բաղրամյան գյուղում ոռոգման ջրագծի կառուցման համար ձեռք է բերվել 661.732 հազ դրամի մետաղական խողովակ, Այգեկ գյուղի վարչական շենքի դռների փականների և միջուկների ձեռք բերման համար կատարվել է ծախս 36.200 հազ. դրամի, Փարաքարի Բարեկամության փողոցի սկզբնամասում գտնվող գոյություն ունեցող դիտահորի վերնամասի կառուցման համար սև մետաղական թիթեղի ձեռք բերում 169.360 հազ. դրամ, ծառերի սրսկման համար ձեռք է բերվել 45.170 հազ դրամ թունաքիմիկատներ, 846.170 հազ. դրամի ձեռք է բերվել լեդ լուսատուներ, եռաֆազ և միաֆազ ավտոմատներ, ալյումինե հաղորդալար, թողարկիչ, համայնքի տարածքում շաբաթօրյակ կազմակերպելու համար ձեռք է բերվել 383.5 հազ դրամի հատուկ նպատակային նյութեր:

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական համայնքային կազմակերպություններին հոդվածով կատարվել է ծախս 196 մլն 150.4 հազ դրամի, որից

| | |
|---|---|
| Փարաքարի և Թաիրովի մանկապարտեզներին - | 34 մլն 500.000 հազ. դրամ, |
| Բաղրամյանի մանկապարտեզին - | 17 մլն 500.000 հազ. դրամ |
| Մերձավանի և Այգեկի մանկապարտեզ - | 38 մլն դրամ |
| Մուսալեռի մանկապարտեզ - | 12 մլն 938.000 հազ. դրամ |
| Նորակերտի մանկապարտեզ - | 19 մլն դրամ |
| Պտղունքի մանկապարտեզ - | 11 մլն 396.888 հազ. դրամ |
| Փարաքարի արվեստի դպրոց - | 42 մլն 113.500 հազ. դրամ |
| Փարաքարի մշակույթ և սպորտ - | 16 մլն դրամ |
| Փարաքարի մարզադպրոցին - | 4 մլն 702.000 հազ.դրամ |

Փոխանցվել է Փարաքարի Արվեստի դպրոցում անվճար սովորող աշակերտների համար ազգային նվագարանների գծով ընթացիկ դրամաշնորհներ 1 մլն 837.400 հազ դրամ:

Այլ նպաստներ բյուջեից հոդվածով վճարվել է հարազատին կորցրած թվով 47 ընտանիքի յուրաքանչյուրին 40 <u>*հազարական*</u> դրամ սոց օգնություն՝ ընդամենը 1 մլն 920.000 հազ դրամ:

Պարտադիր վճարներ հոդվածով կատարվել է ծախս 572.800 հազ դրամ, որից՝ թիվ ՎԴ/9050/05/24 վարչական գործով պետական տուրք 5.900 հազ. դրամ, 13171151 կատարողական թերթիկի պետ տուրք 25.000 հազ.դրամ, ՎԴ/9046/05/24 վարչական գործով պետական տուրք 5.900 հազ. դրամ, ՎԴ/01825/05/21 վարչական գործով պետական տուրք 4.000 հազ. դրամ: ՎԴ/3531/05/24 վարչական գործով պետական տուրք 15.0 հազ.դրամ: Կոյուղագծերի մաքրման և սանիտարական վակումային_մեքենաների հաշվառման համարանիշ տալու համար 36.0 հազ դրամ, 04-069-0056-0115 կադաստրային ծածկագրով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի պետական վերագրանցման վկայականների և պետական տուրքի արժեք 52.0 հազ.դրամ, ՎԴ/9732/05/23 վարչական գործով վերաքննիչ դատարան բողոք ներկայացնելու վճար 12.0 հազ դրամ, ՎԴ/9056/05/24 վարչական գործով նախապես վճարած պետական տուրքի և դատական ծախսի փոխհատուցման գումար 50.0 հազ. դրամ, KIA SPORTAGE ծառայողական և VAZ21114 մեքենաների պետհամարանիշների և հաշվառման վկայագրերի համար 46.0հազ դրամ, 04-094-09996-0001 և 04-094-0181-0001 կադաստրային ծածկագրերով հողամասերի պետական գրանցման համար 6.0 հազ.դրամ, <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի լուծարման համար պետական տուրք 20.0 հազ.դրամ, Մուսալեռի 04-069-0056-0189 կադաստրային ծածկագրով հողամասի միասնական տեղեկանքի համար 10.0 հազ դրամ, թվով 37 հողամասերի պետական գրանցման արժեք 252.0 հազ դրամ և Բաղրամյանի Շինարարների 47 հասցեի վարչական շենքի 24.4 քմ մակերեսով սենյակի վարձակալության տրամադրելու միասնական տեղեկանքի արժեք 10.0 հազ դրամ:

**Ֆոնդային բյուջեից կատարվել է կապիտալ ծախսեր 11 մլն 393.059 հազ դրամի, այդ թվում 10 մլն 227.360 հազ դրամը կապիտալ սուբվենցիա պետ բյուջեից.**

Փարաքար գյուղի Արցախ թաղամասի 1,2,3,4,5-րդ փողոցները կապող ջրանցքի վրայի կամրջի վերանորոգման աշխատանքներ գծով կատարվել է ծախս 975.7 հազ դրամի, Սևանի փողոցի տուֆով սալարկման աշխատանքներ -10 մլն 227.360 հազ դրամ, Կամազ և ՄԱզ մեքենաների համար մարտկոցների ձեռք բերում – 190.0 հազ.դրամ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ Ու Մ**

09 սեպտեմբերի 2025 թվականի N 101-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի ԹԻՎ 72-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Փարաքար համայնքի «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Լիլիթ Գրիգորյանի 2025 թվականի օգոստոսի 28-ի զեկուցագիրը, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի 2025 թվականի սեպտեմբերի 5-ի զեկուցագիրը, Փարաքար համայնքի ավագանու <<Կրթության, մշակույթի, սպորտի, սոցիալական և այլ հարակից հարցերի>> մշտական հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 6 որոշումը՝ ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 4-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Մերձավանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 72-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ

ՋԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 09
գ. Փարաքար

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի
սեպտեմբերի 9-ի թիվ 101 - Ա որոշման

<<Հավելված

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի
օգոստոսի 4-ի թիվ 72- Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ << ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

դրամ

| Հ/Հ | Հաստիքների անվանումը | Հաստիքների քանակը | Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը ամսական աշխատավարձը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Տնօրեն | 1.0 | 220,000 | 220,000 |
| 2 | Մեթոդիստ / ուս. գծով տնօրենի տեղակալ / | 0.75 | 160,000 | 120,000 |
| 3 | Գլխավոր հաշվապահ | 0.75 | 160,000 | 120,000 |
| 4 | Երաժշտության դաստիարակ | 1.25 | 115,200 | 144,000 |
| 5 | Դաստիարակ | 5.85 | 115,200 | 673,920 |
| 6 | Դաստիարակի օգնական | 5.0 | 110,000 | 550,000 |
| 7 | Ռուսաց լեզվի մանկավարժ | 0.5 | 115,200 | 57,600 |
| 8 | Օտար լեզվի (անգլերեն) մանկավարժ | 0.5 | 115,200 | 57,600 |
| 9 | Ֆիզկուլտ հրահանգիչ | 1.0 | 115,200 | 115,200 |
| 10 | Պարուսույց | 1.0 | 115,200 | 115,200 |
| 11 | Բուժքույր | 1.0 | 105,000 | 105,000 |
| 12 | Տնտեսվար | 0.75 | 160,000 | 120,000 |
| 13 | Խոհարար | 1.0 | 108,000 | 108,000 |
| 14 | Խոհարարի օգնական | 1.0 | 105,000 | 105,000 |
| 15 | Օժանդակ բանվոր | 0.5 | 105,000 | 52,500 |
| 16 | Լվացարար | 1.5 | 105,000 | 157,500 |
| 17 | Դռնապան | 1.0 | 105,000 | 105,000 |
| 18 | Հավաքարար | 0.5 | 105,000 | 52,500 |
| 19 | Պահակ-այգեպան | 1.0 | 105,000 | 105,000 |
| 20 | Հատուկ մանկավարժ -Լոգոպեդ | 1.0 | 115,200 | 115,200 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **26.85** | | **3,199,220** |

>>:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 սեպտեմբերի 2025 թվականի N 102-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐՎԱ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով. Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի հաջորդ՝ հերթական նիստի գումարման օր սահմանել 2025 թվականի հոկտեմբերի 6-ին, ժամը 10:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ

ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ

ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 09
գ. Փարաքար